Դասընթացի անվանումը (կրթամոդուլի անվանումը)	**ԳՈՒՆԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ (6ԴԻԶ006)**
ECTS կրեդիտ	4 կրեդիտ
Դասընթացի պատասխանատու դասախոս	Մկրտչյան Ա.Ս., դասախոս
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի ավարտին սովորողն ունակ կլինի. *(գիտելիք և իմացություն)* • սահմանել լույսի և գույնի ֆիզիկական հատկությունները, • դիտարկել մարդու կողմից գույնի ընկալման առանձնահատկությունները, • պարզաբանել գույնի կիրառման՝ գեղարվեստական, ֆիզիոլոգիական, ֆունկցիոնալ, հոգեբանական, օպտիկական և այլ գործոնները, • տարբերակել գույների խառնուրդային համակարգերը և դրանց օրինաչափությունները: *(կարողություններ)* • իրականացնել աշխատանքներ տարբեր ներկանյութերով և գործիքներով, համապատասխան տեխնիկաներով, • կիրառել գույնը, որպես կոմպոզիցիայի արտահայտչականությունը և ամբողջականությունը ապահովող կարևոր միջոց, • ադապտացնել գույների կիրառման սկզբունքները և ընկալման առանձնահատկությունները նախագծային առաջադրանք իրականացնելիս, • հաշվարկել գունային մակերեսների հարաբերակցությունը, • վերլուծել տարբեր նախագծերում կիրառվող գունային համադրությունների հոգեֆիզիոլոգիական ազդեցությունը, դրանց ֆունկցիոնալ և գաղափարական նշանակությունը, • առաջարկել գունային լուծումներ՝ նախագծի ոճային առանձնահատկություններին ներդաշնակ, • գույներն ընտրել և համադրել բովանդակային և միջավայրային կոնտեքստին համապատասխան:

Դասընթացի թեմատիկ ծրագիր	• Ներածություն: Ընդհանուր տեղեկություններ գույնի տեսության մասին: • Լույս և գույն: Լույսի անդրադարձումը մակերևույթից: • Գույնը որպես ֆիզիկական մեծություն: Գույնի հիմնական և վերագրվող հատկանիշներ: • Գունային շրջաններ, շրջանի վերլուծություն՝ գլխավոր, հակադրական, բարեկամական, բարեկամահակադրական գույների խմբեր: Կոլորիտ, գունային գամմա և կոմպոզիցիա: • Գունային տեսողություն: Գույների խառնուրդներ՝ ադդիտիվ և սուբտրակտիվ: Գունային ինդուկցիա, գունային հակադրություններ: • Ներդաշնակ գունային համադրումներ՝ եռյակների և քառյակների սխեմաներ, ծանոթացում գոյություն ունեցող տեսություններին՝ ըստ տարբեր հեղինակների. Լեոնարդո դա Վինչի, Ի. Նյուտոն, Վ. Օստվալդ, Ի.Վ. Գյոթե, Ռունգե, Հելմհոլց, Ա. Գ. Մենսել, Յո. Իտտեն, Վ. Կանդինսկի: • Գույնի կիրառման արդի հիմնախնդիրները: • Գույնը գրաֆիկական դիզայնում: • Գունային միջավայրի ստեղծմա հիմնական մոտեցումները:
Դասընթացի գրականության ցանկ	• Агостон Ж. Теория цвета и её применение в искусстве дизайна, М., Мир, 1982г. • Зайцев А. Наука о цвете и живопись, Москва, Искусство, 1986г. • Иттен И. Искусство цвета/пер. с нем; М., Изд. Д. Аронов, 2000г. • Лаврентьев А.Н. История дизайна, М., Гардарики, 2008г. • Месяц С. В. Иоганн Вольфганг Гете и его учение о цвете (часть первая), М., Кругъ, 2012. • Best J. (ed.) Colour Design, Theories and Application, 2nd Edition, Elsevier Ltd., 2017. • Arnkil Herald (ed.), Anter Karin Fridell, Ulf Karen Color and Light-Concepts and Confusions, Unigrafia OY, Helsinki, 2012. • Ormitson Rossalind, Robinson Michael, Colour Source Book, Flame Tree Publishing, London 2007.